# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 2 | ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼ ԻՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏՈՒՓՈՎ Մեդալը բաղկացած է հնգանկյուն կախիչից և դրան կապօղակով ամրացած սկավառակից: Սկավառակի տրամագիծը 35 մմ է, այն ոսկեգույն է, պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից, փայլատ տեխնոլոգիայով և արտադրվում է դրոշմման ճանապարհով: Սկավառակի դիմերեսին պատկերված է հարկադիր կատարումն ապահովող ծառայության ռելիեֆային խորհրդանշանը՝ կենտրոնական մասում պատված երկնագույն արծնիով: Խորհրդանշանը ներքևի մասում եզերվում է «ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» գրվածքով, իսկ վերևի մասում՝ արծնապատ եռագույնով: Մեդալի դարձերեսին հայերեն ուռուցիկ մեծատառերով գրված են «ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» բառերը: Խորհրդանշանի նժարները պատված են սպիտակ էմալով, գիրքը՝ կապտավուն էմալով: Զինանշանի վերևի մասում, մեդալի շրջագծով, դրոշմված է Հայաստանի Հանրապետության դրոշը՝ 25 մմ երկարությամբ և 6 մմ լայնությամբ: Եռագույնի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ 6x6 մմ տրամագծով: Ներքևի մասում կորաձև մակագրություն է՝ «Անբասիր ծառայության համար»: Մեդալը կանթի և օղի օգնությամբ (երկուսն էլ ոսկեգույն են) ամրանում է սև և ոսկեգույն մետաքսե մուարե ժապավենով երեսպատված և 2 հատ սև շերտավորված եզրերով հնգանկյուն շերտաձողին: Կախիչի դարձերեսին ամրացված է մեդալը հագուստին ամրացնելու հարմարանք: Մեդալի դարձերեսին դրոշմված է «Հարկադիր կատարման ծառայություն» բառերը և մեդալի հերթական համարը: Մեդալի պատկերը՝ համաձայն N 1 նկարի: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 2 | |